ԱՌԱՋԻՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Արևելահռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև Հայաստանի առաջին բաժանման (387 թ.) նախօրյակին հայոց թագավոր Արշակ III Արշակունին իր ողջ ընտանիքով հեռացավ Հայաստանի ապագա պարսկական մասից և հաստատվեց Հռոմեական կայսրության տիրապետության տակ անցնելիք Հայաստանում, «լաւ համարեալ նուազ կողմանն տիրել՝ և ծառայել քրիստոնեայ թագաւորի, քան յոլովից իշխել՝ և մտանել ընդ լծով հեթանոսաց»[1]։ Պարսկական տիրապետության տակ անցած Հայաստանից արևմուտք գնացին նաև մի շարք նախարարական ընտանիքներ, որոնց ներկայացուցիչները ծառայության մտան հռոմեական (հետագայում՝ բյուզանդական) արքունիքում և բանակում։

Փաստերը վկայում են, որ հայ ազնվականության մուտքը Բյուզանդական կայսրության արքունիքն ու բանակը սկսվեց շատ ավելի վաղ, քան մենք կարծում էինք՝ հենց 385 թ. անմիջապես հետո։ Այդ բանի օգտին են վկայում այնպիսի վստահելի ու ճշմարտապատում աղբյուրներ, ինչպիսիք են Թեոդոս II-ի (408—450 թթ.) և Հուստինիանոս I-ի (527—565 թթ.) Դատաստանագրքերը (Codex Theodosianus և Codex Iustinianus), *որոնց սույն հոդվածում շրջանառության մեջ դրվող տվյալներ հայագետների ուշադրությունից վրիպել են, իսկ բյուզանդագետները չեն գնահատել ըստ արժանվույն։*

Մենք մի այլ առիթով[2] անդրադարձել էինք ականավոր գիտնական Ն. Ադոնցի դատողություններին Բյուզանդիայում ծառայության մտած հայ ազնվականության վերաբերյալ, որոնց համաձայն «բոլոր այն հայերը, որոնք դերակատարներ են հանդիսանում բյուզանդական պատմության մեջ, գրեթե բացառապես պատկանում էին հայ ազնվականության դասին»[3]։ Սակայն հարցը նրանում է, որ Հայաստանում քաջ հայտնի նախարարական ընտանիքներից և ոչ մեկը[4] բյուզանդական աղբյուրներում հանվանե չի հիշված։ Այդ առընչությամբ մենք մեջ էինք բերել նաև Ն. Ադոնցի իրավացի խոսքերը, թե «բյուզանդական հայերի տոհմական ծագումը դժվար է որոշել հաստատապես, եթե օգնության չեն գալիս հայ աղբյուրները դրական ցուցումով»[5]։ Ուսումնասիրողները աշխատում են որոշել Բյուզանդիայում աչքի ընկած հայ գործիչների տոհմանունը նաև ելնելով այն հանգամանքից, որ «նախարարական տները տոհմական անուններ ունեին մի հայտնի չափով յուրահատուկ, որոնց միջոցով կարելի է երբեմն որոշել թե ով ո՞ր տոհմին էր պատկանում»[6]։ Գիտնականը ավելացնում է, թե «հաճախ անունները փոխվում էին ամուսնության

---

1 *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, գիրք Գ, գլ. 42, էջ 310։*

2 *Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1985. № 4, էջ 135։*

3 *Ն. Ա դ ո ն ց. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 495։*

4 *Բացառությամբ մեկի՝ Գնունիների, որի մասին տե՛ս մեր հոդվածը «Պատմա-բանասիրական հանդեսում» (1985, № 4)։*

5 *Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 486։*

6 *Նույն տեղում։*

հետ, որով ավելի դժվարանում է օգտվել անունների ուղեցույցից»[7]։ Այդ վերապահությունը, սակայն, որ միանգամայն արդարացի է հետագա դարերի կապակցությամբ, մեր ուսումնասիրած ժամանակաշրջանին չի վերաբերում, քանի որ սույն հոդվածում խոսք է գնալու հայ ազնվականության՝ Բյուզանդական կայսրության մեջ ծառայության մտնելու նախասկզբնական շրջանի մասին, երբ խառն ամուսնությունների վերաբերյալ դեռ շուտ է խոսել։

Թեոդոս II-ի Դատաստանագրքում այդ կայսեր արքունիքում 414 թ. տակ հիշվում է ոմն Մուշեղ (Musellios), ամենայն հավանականությամբ՝ Մամիկոնյան։ Նա ուներ պրեպոզիտոսի բարձր պաշտոնը[8]։ Հայաստանի պարսկական մասում Արշակունյաց հարստության վերացումից (428 թ.) ընդամենը 14 տարի առաջ[9] Բյուզանդիայում հայ բարձրաստիճան գործչի հանդես գալը վկայում է, որ նա (կամ նրա ծնողները, ընտանիքը) ամենայն հավանականությամբ 385 թ. Արշակ III շքախմբում անցել է Հայաստանի արևմտյան մասը։ Մովսես Խորենացին պարզ ցույց է տալիս. «Գնացին զհետ նորա (Արշակայ—Հ. Բ.) հանդերձ կանամբք և որդւովք և նախարարութիւնք որ ի բաժնին Շապհոյ (պարսից արքայից արքայի—Հ. Բ.) թողլով գիւրաքանչիւր արարս և զգիւղս և զդաստակերտս»[10]։ Կասկած չի կարող լինել, որ Արշակ III-ի հետ գնացող նախարարների թվում էին և Մամիկոնյանները։ Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Հայաստանի պարսկական մասի թագավոր Խոսրով IV-ը (385—388 թթ.) իր զորքերի սպարապետ նշանակեց Սահակ ասպետին, որն անցյալում գնացել էր Հայաստանի արևմտյան մասը և անսալով պարսից Շապուհ արքային վերադարձել Խոսրով IV-ի մոտ, այսինքն սպարապետության պաշտոնը տվեց Բագրատունիների նախարարական ընտանիքի անդամին, ապա պարզ է, որ հայ Արշակունիների սպարապետության գործակալությունը գլխավորող Մամիկոնյանները Արշակ III-ի կողմն էին անցել։ Հայտնի է, որ նրանցից ամենաբևեռին նշանավոր Սամուել Մամիկոնյանն էր, որ առանց վարանելու սպանել էր քրիստոնեական հավատն ուրացած և զրադաշտականությունն ընդունած հորն ու մորը[11]։ Մովսես Խորենացու տվյալներով, երբ Արշակ III-ի և Խոսրով IV-ի միջև պատերազմ բռնկվեց[12], Սամուել Մամիկոնյանը պատերազմում էր Արշակի կողմից, որովհետև նա Արշակի ներիմն էր։ Հետաքրքրական է նշել, որ Արշակ III-ի մահից (390 թ.) անմիջապես հետո Հայաստանի պարսկական մասի թագավոր Խոսրովը նամակով դիմեց Արշակի հետ հեռացած նախարարներին, կոչ անելով վերադառնալ։ Նախարարները ընդառաջեցին նրա կոչին, քանի որ Բյուզանդիայում իրենց սպասելիքները չիրականացան. «Տեսեալ նախարարացն Հայոց,—գրում է Մովսես Խորենացին,—եթէ ոչ կացուցին Յոյնք ի վերայ նոցա թագաւոր ...խորհեցան կամաւ հնազանդել թագաւորին Խոսրովու»[13]։ Խոսրովի մասն անցան բոլոր նախարարները, բացառությամբ հիշյալ Սամուել Մամիկոնյանի, ասել է՝ և նրա ընտանիքի։ Սամուել Մամիկոնյանը պատճառներ ուներ չվերադառ-

---

7 Նույն տեղում։

8 Theodosiani Libri XVI cum Constitutionibus Sirmondianis edidit adsumpto apparatu P. Kreugeri Th. Mommsen. Vol. I, Pars Posterior, Textus cum apparatu editio secunda Lucis ope expressa. Berolini, 1954, XI. 28, 9.

9 Իրականում 14-ից էլ պակաս, քանի որ Մուշեղի հիշատակությունը 414 թ. դեռ չի նշանակում, որ նա պրեպոզիտոսի պաշտոնին տիրացավ հենց այդ թվականին, ոչ էլ որ նա Բյուզանդիայում իր կարիերան սկսեց հենց այդպիսի բարձր պաշտոնով։

10 Մովսես Խորենացի, Գ, 44, էջ 313։

11 Մովսես Խորենացի, Գ, 48, էջ 319։ Հմմտ. Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1933, էջ 185։

12 Հ. Մանանդյանը Խորենացու վկայությունն այս պատերազմի մասին անստույգ և անարժանահավատ է համարում (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 239), թեև այլ պատմաբաններ չեն կասկածում իրողությանը։

13 Մովսես Խորենացի, Գ, 48, էջ 317։

նալու պարսկական Հայաստան, «քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան յաղագս ուրացութեան, և զմայր իւր Տաճատուրհի[14], և երկնչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց՝ ոչ իշխէր զատչել ի Յունաց»[15]։ Սմբատը, ձեռք գցելով հայ նախարարներին ուղղված խոսքերի նամակը, ինչպես և նախարարների գրած պատասխանի պատճենը, «զատուցեալ ի նոցանէ (այսինքն՝ այս նախարարներից—Հ. Բ.) գնաց առ կայսրն Արկադ»[16]։

Ասվածից չի կարելի եզրակացնել, թե Մամիկոնյանները վերջնականապես մնացին Բյուզանդիայում։ Բյուզանդիայում մնաց, հավանաբար, Սմբատը իր ընտանիքով, քանի որ շատ չանցած Մամիկոնյանները պիտի գլխավորեին պայքարը Սասանյան Իրանի դեմ 451 և 482—484 թթ., 571 թ., ապա և բազմաթիվ հերոսամարտեր արաբական տիրապետության դեմ։ Բյուզանդիայում, համենայն դեպս IV դարի վերջին և V դարի առաջին կեսին գործում էին Սմբատի ընտանիքի անդամներն ու շառավիղները։ Սմբատ Մամիկոնյանի հետ կապված դեպքերը տեղի ունեցան 390 թ. հետո, բայց ոչ 395 թ. առաջ, քանի որ Արկադիոս կայսրը, որին դիմեց Սմբատ Մամիկոնյանը, սկսեց թագավորել 395-ից սկսած։

Արկադիոս կայսրը (395—408 թթ.) Սմբատ Մամիկոնյանին, ինչպես սպասելի էր, ընդունեց շատ սիրալիր. «Իսկ Արկադեայ,—գրում է Մովսես Խորենացին,—բարի արարեալ նմա, հրամայէ զհաւասար թղթոցն (Խոսրով թագավորի նամակը Բյուզանդիա անցած հայ նախարարներին և նրանց պատասխանի պատճենը—Հ. Բ.) հելլէն գրով ի դիւանի իւրում դնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ապստամբողաց. որ կայ մինչև ցայսօր»[17]։

Այս դեպքերից անմիջապես հետո, ահա, 414 թ. բյուզանդական կայսրերի արքունիքում ենք տեսնում պրեպոզիտոս Մուշեղին։ Պրեպոզիտոսը կայսեր սենեկապետն էր։ Դիոկլետիանոս կայսեր ժամանակ կոչվում էր a cubiculo, այնուհետև՝ praepositus sacri cubiculi կամ praepositus sacri palatii, հետագայում՝ մեծ կիտոնիտ[18]։ Նա շատ ազդեցիկ անձնավորություն էր պետության մեջ։ Նախապես մտնում էր respectabiles դասի մեջ, Թեոդոս I-ի ժամանակ ստացավ illustrius-ի բարձր պատվաստիճանը[19]։

Պրեպոզիտոսի իրավասությունները շատ ավելի լայն էին, քան կարելի է եզրահանգել՝ ելնելով նրա սենեկապետ լինելու հանգամանքից։ Նա ուներ նաև ֆիսկալ իրավունքներ։ Դա երևում է Հոնորիոս և Թեոդոս II կայսրերի 414 թ. հրապարակած այն հրովարտակից, որի մեջ հիշված է խնդրո առարկա Մուշեղը։ Հրովարտակը վերաբերում է ազնվականության և կուրիալների՝ կայսերական գանձարանին ունեցած պարտքերի վճարման հետաձգման հարցին։ Թեև այն ի գործադրություն հասցեագրված է պրետորյան պրեֆեկտ Անթեմիոսին, բայց ուղղված էր նաև Իլլիրիա և Արևելք դիոցեզների բոլոր պրովինցիաներին և դրա դրույթների ի կատար ածելը դրվում էր նաև հիշյալ Մուշեղի վրա, որի իրավասությունները, ամենայն հավանականությամբ, տարածվում էին Արևելք դիոցեզի սահմաններում։

---

14 Փավստոսի տվյալներով Սմբատի մայրը կոչվում էր Որմիզդուխտ և նա պարսից Շապուհ արքայի թույրն էր (էջ 185)։

15 Մովսես Խորենացի, Գ, 48, էջ 319։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։

18 «Կիտոնիտը» հանդիպում է հայկական աղբյուրներում։ Կիտոնիտ է կոչված Գրիգոր Մագիստրոսը Կեչառիսի 1051 թ. արձանագրության մեջ։

19 Տե՛ս R. Guilland. Le Prepositе.—Recherches sur les Institutions byzantines, t. I, Berlin—Amsterdam, 1967, p. 333. Իլլյուստրիոսի պատվաստիճանը կրող մի այլ հայ հիշվում է Ալամանի 637 թ. արձանագրության մեջ։ Տե՛ս Կ. Կոստանյան. Վիմական տարեգիր. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 1։

Անցնենք պրեպոզիտոս Մուշեղի անձնավորությանը։ Նրա ազնվականական ծագումը, կրած անունը վկայում են նրա հայ լինելու և Մամիկոնյան նախարարական ընտանիքին պատկանելու մասին։ Մուշեղը, ինչպես ասվեց, պրեպոզիտոսի բարձր պաշտոնը պիտի ստացած լիներ 414-ից առաջ և մինչև նման բարձրության հասնելը բյուզանդական արքունիքում պիտի զբաղեցրած լիներ ավելի ցածր պաշտոններ։ Արդ, տրամաբանական չէ՞ ենթադրել, որ նա Սամուել Մամիկոնյանի հետ պիտի սերտ ազգակցական կապ ունեցած լիներ, որ Արկագիոս կայսրը, ի հատուցումն Սամուել Մամիկոնյանի՝ կայսրությանը ցուցաբերած հավատարմության ու մատուցած ծառայությունների։ Նրա և նրա ընտանիքի այլ անվանի անդամների առջև քաղաքական լայն ասպարեզ պիտի բացած լիներ, այդպես պիտի վարված լիներ նաև Արկագիոսի որդի և ժառանգ Թեոդոս II-ը։ Մուշեղը Սամուել Մամիկոնյանի որդի՞ն էր, եղբա՞յրը։ Ժամանակագրական տվյալները ապա և ազգակցական պատկանելությունը չեն բացառում նման հնարավորությունը, թեև այդ ենթադրությունը ուղղակի փաստերով հիմնավորելն անհնարին է։

Այսպիսով, պրեպոզիտոս Մուշեղը առաջին Մուշեղ Մամիկոնյանն էր բյուզանդական պետության մեջ։ Նրան հաջորդելու են բազմաթիվ Մուշեղներ, որոնք Բյուզանդական կայսրության ավագանու կազմում փայլելու են իրենց պետական ու ռազմական տաղանդով։ Մուշեղ անունը (Մոսելե, Մուսելե, Մուսելես) դառնալու է ազգանուն և տեղ է գտնելու անգամ բյուզանդական էպոսում։ Մուշեղ (Μουσελῶμ) է կոչվելու Դիգենիս Ակրիտասի (բյուզանդական Սասունցի Դավթի) պապը՝ մոր կողմից։

Մենք փաստեր ունենք ասելու, որ Արկագիոսն ու Թեոդոս II-ը լայն ասպարեզ էին բացել Սամուել Մամիկոնյանի ընտանիքի և նրա շառավիղների առջև։ Հարցն այն է, որ Մուշեղը միակը չէր, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում բյուզանդական արքունիքում բարձր դիրք էր գրավել։ Հուստինիանոս I-ի Դատաստանագրքում հիշվում է մի նշանավոր հայ ևս։ Դատաստանագրքում տեղ է գտել Արևելահռոմեական կայսրության կայսր Թեոդոս II-ի և Արևմտահռոմեականի կայսր Վալենտինիանոս III-ի 442 թ. հրապարակված մի հրովարտակ՝ հասցեագրված պրեպոզիտոս Արտաշեսին (Artaxi praeposito sancti cubiculi), որի իրավունքները ևս շատ լայն էին, քան կարելի է եզրակացնել, ելնելով նրա պաշտոնի հանգամանքից։ Հրովարտակը հետևյալն է. «Կայսերակիցներ Թեոդոս և Վալենտինիանոս սրբազան կուբուկլիոնի պրեպոզիտոս Արտաշեսին։ Սույն օրենքով մենք սահմանում ենք, որ եթե մեր տնտեսությունների որևէ կոլոն, բնակիչ կամ ստրուկ դատարանում գործ հարուցի կամ որևէ մեկի կողմից մեղադրվի քրեական կամ քաղաքացիական գործով, ապա հետաքննությունը պիտի կատարվի ոչ այլ տեղում, այլ միայն ու միայն քո մեծափառության մոտ, մի այրի, որ կրում է սպեկտաբիլիս կոչումը և կառավարում է մեր տնտեսությունները։ Ոչ մի ուրիշի կարգադրությունը, բացառյալ դատարանի ավելի բարձր կարգադրության, թույլատրելի չէ»[20]։

Այսպիսով, տեսնում ենք, որ այս Արտաշեսը (Ἀρταξῆς) սոսկ սենեկապետ չէր, այլ կայսեր տնտեսությունների վերակացու՝ լիազորված դատաստան տեսնելու իրավունքներով։ Միանգամայն հավանական է, որ այս Արտաշեսը ևս, ինչպես և վերոհիշյալ Մուշեղը, Մամիկոնյան էր[21]։ Նա մասնակցել է 451 թ. գումարված Քաղկեդոնի Չորրորդ տիեզերական ժողովի աշխատանքներին։

---

[20] Corpus Iuris Civilis, vol. II, Codex Iustinianus, recognovit et retractavit Paulus Kreuger. Berolini, 1959, III, 26, 11. Ռ. Գիյյանը, թեև մի քանի անգամ հիշում է այս Արտաշեսին, անունը միշտ աղավաղված ձևով է բերում՝ Araxes, Atarxes. Նա սխալ է նշում նաև հրովարտակի թվականը՝ 422 թ.։ Տե՛ս R. Guilland. Op. cit., pp. 335. 355.

[21] Արտաշես և Մուշեղ անունները սովորական էին Մամիկոնյանների ընտանիքում։ Այդ անուններն էին կրում Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակի որդիները։ Տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1904, էջ 110—111, 148։

արդեն որպես «նախկին պրեպոզիտոս» (ἀπὸ πραιποσίτων)[22] և սենատոր։ Ասել է, դառնալով «նախկին պրեպոզիտոս», նա շարունակում էր մնալ սենատի անդամ և այնքան վստահելի էր, քաղաքական ու եկեղեցական հարցերում այնքան բանիմաց, որ Մարկիանոս կայսրը 11 այլ սենատորների հետ նրան մասնակից դարձրեց դարակազմիկ սիեզերական Չորրորդ ժողովի աշխատանքներին։

Արդ, ազգակցական ի՞նչ կապ ունի հիշյալ Արտաշես պրեպոզիտոսը բյուզանդական արքունիքում անցյալում իր պաշտոնը վարած Մուշեղի հետ։ Նրանք պարզապես պատկանում են միևնույն՝ Մամիկոնյանների նախարարական տոհմի՞ն, թե՞ կոնկրետ Սամուել Մամիկոնյանի ընտանիքին։ Ինչ էլ եղած լինի, և՛ Մուշեղին, և՛ Արտաշեսին կարելի է համարել հայկական նախարարական այդ տոհմի նշանավոր ներկայացուցիչները բյուզանդական արքունիքում, որտեղ հեռագայում, հատկապես VIII—IX դդ., նրանք բարձրանալու էին անդամ բյուզանդական գահին (Արտավազդ, Թեոդորա, Միքայել Գ) և զբաղեցնելու էին կայսրության բարձրադույն պաշտոնները (Վարդ Մամիկոնյան, Պետրոնաս Մամիկոնյան և ուրիշներ)։

Նշենք նաև, որ բյուզանդական արքունիքում պրեպոզիտոսի պաշտոնը վարել են այլ հայեր ևս, որոնցից ամենանշանավորը Հուստինիանոս I-ի սենեկապետ Նարսեսն էր, որը միաժամանակ ֆինանսական խոշոր գործիչ էր և տաղանդավոր զորավար։ Պակաս նշանավոր չէր և Վասիլ Մակեդոնացին՝ Միքայել III-ի արքունիքում։

ПЕРВЫЕ МАМИКОНЯНЫ ПРИ ВИЗАНТИЙСКОМ ДВОРЕ

Доктор ист. наук Р. М. БАРТИКЯН

Резюме

Накануне раздела Армении между Восточно-римской империей и Сасанидским Ираном (387 г.) армянский царь Аршак III удалился из будущей персидской части страны и обосновался на отходившей к империи части Армении. Вместе с ним отправились и многие нахарары, в том числе Мамиконяны во главе с Самуэлом. Они поступили на военную и придворную службу. Между тем в Кодексах Феодосия II и Юстиниана I упоминаются армянские деятели Мушег (Museilios, 414 г.) и Арташес (Ἀρτάξης. 442—451 гг.), достигшие высокой должности препозита (главы ведомства императорских покоев) с широкими финансовыми и судебными полномочиями. Один из них, Арташес, уже сенатор и экс-препозит, участвовал в работе IV Вселенского собора в Халкидоне. Мушег и Арташес на основании своих имен, традиционных в феодальном роде Мамиконянов, считаются принадлежащими к этой знаменитой нахарарской семье. Они оказываются первыми деятелями этой семьи, служившими в Византии. По всей вероятности, они приходятся близкими родственниками упомянутому выше Самуэлу Мамиконяну.

---

[22] *Տե՛ս* J. D. Mansi. Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio. Vol. 6, Graz, 1960, p. 565; Schwartz. Acta Conc. Oec., I, 1, p. 55; I, 2. pp. 70, 84; R. Guilland. Op. cit. *Քաղկեդոնի ժողովի արձանագրություններում Արտաշեսը ներկայացված է այսպես.* τοῦ μεγαλοπρεπεστάτου καὶ ἐνδοξότατου ἀπὸ πραιποσίτων Ἀρτάξου *(լատիններեն ընագրում՝* magnificentissimo et gloriosissimo expraeposito sacri cubiculi (Artaxerxae). *այսինքն՝ «մեծափառ և ամենափառավորյալ նախկին պրեպոզիտոս Արտաքսես» (հունարենում չկա «շ» հնչյունը, այն արտահայտվում է կամ «σ»-ով կամ «ξ» (քս)-ով։ Արտաշեսը մասնակցեց հիշյալ ժողովի առաջին, երրորդ, չորրորդ և վեցերորդ նիստերին, որոնք կայացան 451 թ. հոկտեմբերի 8-ին, 10-ին, 17-ին և 25-ին։ Տե՛ս* E. Honigmann. Le cubiculaire Urbicius.—Revue des Études Byzantines, t. VII, fasc. I, 1949, p. 50; R. Janin. Rôle des commissaires imperiaux byzantins dans les conciles.—Revue des Études Byzantines, t. XVIII, 1960, p. 101 sqq.